

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2020թ.
/ տևողությունը – 120 րոպե/

10 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Հասարակածի վրա գտնվող երկու քաղաքների իրական հեռավորությունը 11250 կմ է, իսկ քարտեզի վրա՝ 45 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.**
 1. 1 : 4 000 000
 2. 1 : 2 500 000
 3. 1 : 25 000 000
 4. 1 : 40 000 000
2. **Քաղաքային ագլոմերացիաների ընդարձակման և միաձուլման հետևանքով ձևավորված ավելի հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտին կոչվում է.**
 1. տրանսպորտային հանգույց
 2. տեխնոպոլիս
 3. ուրբանիզացիա
 4. մեգալոպոլիս
3. **Մթնոլորտային ճնշումը կախված է.**
 1. տեղումների տեսակից
 2. վայրի բացարձակ բարձրությունից
 3. ամպամածությունից
 4. վայրի բուսածածկույթից
4. **Ո՞ր տիպի քաղաքներին են բնորոշ անսովոր խիտ և ցածրահարկ կառուցապատումը և բարեկարգման ցածր մակարդակը.**
 1. եվրոպական
 2. լատինաամերիկյան
 3. ամերիկյան
 4. ասիական
5. **Հունիսի 22 – ին հարավային կիսագնդի ցանկացած վայրի համար ճառագայթների անկման անկյունը n° բանաձևով է հաշվարկվում.**
 1. $\alpha = 90^\circ + \varphi$
 2. $\alpha = 90^\circ - (\varphi + 23,5^\circ)$
 3. $\alpha = 90^\circ - (\varphi - 23,5^\circ)$
 4. $\alpha = 90^\circ - \varphi$
6. **Ավստրալիայի վերաբերյալ n° պնդումն է սխալ.**
 1. հյուսիսային շրջաններում տեղումները տարվա ընթացքում բաշխվում են հավասարաչափ
 2. մեծ մասն արևադարձային գոտում է
 3. ամենաչոր մայրցամաքն է
 4. արևելյան շրջանների կլիման առավելապես ձևավորվում է պասսատների ներգործությամբ
7. **Աֆրիկայի վերաբերյալ n° պնդումն է ճիշտ.**
 1. Հասարակածային կլիմայական գոտում տեղումները թափվում են առավելապես ձմռանը:
 2. Մայրցամաքի ծայր հյուսիսային և հարավային շրջանները գտնվում են մերձարևադարձային գոտիներում:
 3. Հասարակածային կլիմայական գոտում ջերմաստիճանի տատանումների տարեկան լայնույթը $10 - 12^\circ \text{C}$ է:
 4. Ձմռանը մերձարևադարձային գոտիներում տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
8. **Թուրքական լեզվախմբի ժողովուրդներ չեն.**
 1. թուրքմենները և թուրքերը
 2. դազախները և ուզբեկները
 3. տաջիկները և պարսիկները
 4. ղրղզները և ադրբեջանցիները
9. **Տրանսպորտային ցանցի գծային կոնֆիգուրացիան բնորոշ է.**
 1. ԱՄՆ –ին և Չինաստանին
 2. Արգենտինային և Բրազիլիային
 3. Կուբային և Չիլիին
 4. Կանադային և Ռուսաստանին

10. Ո՞ր պնդումն է ճիշտ.

1. Ջրէկ-ները կառուցվում են հիմնականում հարթավայրային գետերի վրա, որովհետև մեծ են դրանց անկումը և թեքությունը:
2. Աէկ – ներն ապահովում են աշխարհում արտադրվող էներգիայի կեսից ավելին:
3. Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
4. Պողպատի ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են գիտական կենտրոնների մոտ:

11. Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բացարձակ բարձրությունների աճման.

1. Դերջանի, Երզնկայի, Կամախի, 2. Մշո, Բալահովտի, Խարբերդի,
3. Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի, 4. Երզնկայի, Կարնո, Աշկալայի:

12. Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.

1. չոր և խիստ ցամաքային է, 2. չոր մերձարևադարձային է,
3. չափավոր ցամաքային է, 4. խոնավ մերձարևադարձային է:

13. <<Պետություն – պետական կառավարման ձև>> գույգերից ընտրել ճիշտը.

1. ԱՄՆ – խորհրդարանական հանրապետություն,
2. Գերմանիա – նախագահական հանրապետություն,
3. Ճապոնիա – բացարձակ միապետություն,
4. Նիդերլանդներ – սահմանադրական միապետություն:

14. Ռացիոնակ բնօգտագործման օրինակ է.

1. հումքի երկրորդային շահագործումը,
2. անտառների հատման միջոցով վարելահողերի ընդարձակումը,
3. փայտանյութի փոխադրումը խոշոր գետերով,
4. օգտակար հանածոների նոր հանքավայրերի շահագործումը:

15. ՆԱԵԿ – ի անդամ երկիր է.

1. Գերմանիան 2. Նիդերլանդները 3. Պակիստանը 4. Վենեսուելան

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս. լ. 41 ° 30' և արմ. Ե. 23 ° 30' : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյան աստիճանային մեծությունը հունիսի 22 – ին, կեսօրին:
17. Գետի լայնությունը 8 մ է, միջին խորությունը՝ 0.8 մ, իսկ արագությունը՝ 5 մ/ վրկ : Որոշել գետի ծախսը (մ³ / վրկ):
18. Երկրի գյուղական բնակչության թիվը 6 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 20 մլն մարդ: Որոշել ուրբանիզացման մակարդակը (%):
19. Երկրի ավտոմոբիլային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 8 մլն տոննա բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 480 մլն տ . կմ: Որքա՞ն կլինի բեռների փոխադրման հեռավորությունը (կմ):
20. Երկրում ցորենի համախառն բերքը կազմում է 1 200 000 ցենտներ, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 50 000 հեկտար: Որոշել ցորենի միջին բերքատվությունը (ց / հա) :